Co-funded by the European Union

Erasmus+ QA4VET

# QA4VET ծրագրի արդյունքների ներկայացում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության
«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ
Խոսնակ՝ տնօրեն Քրիստինե Հակոբյան
13 հուլիսի 2026 թ.

*Implementing partners:*

araCip · involas Institute for Vocational Education and Training, Labour Market and Social Policy · ANQA NATIONAL CENTER FOR PROFESSIONAL EDUCATION QUALITY ASSURANCE FOUNDATION · ACEP

# QA4VET ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

**Փաստահենք SWOT**

Ուժեղ կողմերը առաջին անգամ հիմնավորվեցին տվյալներով

• Կատարվեց մոդուլների քարտեզագրում
• Ժամաքանակների հաշվարկ
• Վերջնարդյունքների վերլուծություն

**Գործատուների նոր դեր**

Գործատուները դարձան կրթական ծրագրերի վերջնարդյունքերի համամշակողներ

• Քննարկվեցին բոլոր ուսումնառության վերջնարդյունքները
• Հստակեցվեցին անհրաժեշտ կարողությունները
• Սահմանվեցին մեթոդներն ու ռեսուրսները

**Կարողությունների մոնիթորինգ**

Ստեղծվեց կարողությունների շարունակական գնահատման հիմք

• Հստակ չափելի վերջնարդյունքներ
• Միասնական գնահատման հիմք
• Տվյալահենք բարելավումներ

# ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

**Յուրաքանչյուր ռեսուրս կապվեց ուսումնառության կոնկրետ վերջնարդյունքի հետ**

**Փոխվեցին ֆինանսավորման առաջնահերթությունները**

*Ռեսուրսները գնահատվեցին ոչ թե դրանց առկայությամբ, այլ ուսումնառության վերջնարդյունքների ձևավորման մեջ ունեցած ներդրմամբ:*

# ՓՈԽՎԵՑ ՈՉ ԹԵ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ, ԱՅԼ ԴՐԱ ԱՊԱՑՈՒՅՑՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

**Ապացույցներ**

**Տվյալների վերլուծություն**

**Հիմնավորված որոշումներ**

*Ամրապնդվեց այն մոտեցումը, որ որակի ապահովման յուրաքանչյուր պնդում, եզրակացություն կամ որոշում պետք է հիմնված լինի համապատասխան ապացույցների, վերլուծված տվյալների և հիմնավորումների վրա:*

# ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԻՄՆՎԵՑԻՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎՐԱ

Ուսանող | Գործատու | Դասախոս | Ֆինանսներ

↓↓↓↓

Տվյալների վերլուծություն

↓

Զարգացման որոշումներ

*Բարելավման որոշումները հիմնվեցին ոչ թե առանձին կարծիքների, այլ համադրված տվյալների վերլուծության վրա:*

# SWOT-ԻՑ ԴԵՊԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| SWOT-ի բացահայտում | → | Զարգացման ուղղություն |
|---|---|---|
| 📚 Ուսումնական և մեթոդական ձեռնարկների պակաս | → | Ձեռնարկների մշակում |
| 🌍 Օտար լեզվի զարգացման անհրաժեշտություն | → | Ներքին լեզվական վերապատրաստումներ |
| 💰 Ռեսուրսների անբավարարություն | → | Լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրների որոնում |
| 🏢 Լսարանային տարածքների սղություն | → | Նոր մասնաշենքի կառուցման առաջարկ |

*SWOT-ը ոչ միայն բացահայտեց բարելավման կարիքները, այլ յուրաքանչյուր կարիքի համար ձևավորեց զարգացման հստակ ուղղություն:*

# ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ  ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԵՑ ՆՈՐ ԸՆԿԱԼՈՒՄ

## Կրթական ծրագրի նմշակման նոր տրամաբանություն

Աշխատաշուկայի պահանջները

⬇

Անհրաժեշտ կարողություններ

⬇

Ուսումնառության վերջնարդյունքներ

⬇

Մոդուլներ • Մեթոդներ • Ռեսուրսներ • Գնահատում

*Ծրագրերը սկսեցինք մշակել ոչ թե «ինչ պետք է դասավանդենք» հարցից, այլ՝ «ինչպիսի մասնագետ է անհրաժեշտ աշխատաշուկային» հարցից։*

Այս գործընթացը մեզ համար պարզապես փորձնական հավատարմագրման կամ SWOT վերլուծության իրականացում չէր: Այն հնարավորություն տվեց նորովի գնահատել մեր գործունեությունը, վերաիմաստավորել մեր ուժեղ կողմերը, արմատապես փոխել մեր աշխատաոճը և մոտեցումները, բացահայտել բարելավման ուղղությունները և դրանք վերածել իրական գործողությունների: Մենք հասկացանք, որ որակի ապահովումը չի սկսվում հաշվետվությունից և չի ավարտվում գնահատմամբ: Այն սկսվում է ճիշտ հարցեր տալուց, շարունակվում է ապացույցների հավաքագրմամբ և ավարտվում է ավելի հիմնավորված որոշումների կայացմամբ:

Ինչ վերաբերվում է փորձի փոխանցմանը, ապա այս ծրագրի իրականացման  արդյունքում Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջն առաջարկել է գործընկերներին ստեղծել ՄԿՈՒ-ների որակի ապահովման պատասխանատուների ցանց, որի շրջանակներում հնարավոր կլինի իրականացնել փորձի փոխանակման, լավագույն փորձի ներդրման գործընթացներն արդեն ինստիտուցիոնալ և համակարգված ձևով:

Այս փորձառությունը մեզ համար ոչ թե ավարտ էր, այլ որակի շարունակական բարելավման նոր մեկնարկ և արդյունքահեն կառավարման ամրապնդում:

Շնորհակալություն

Funded by the European Union. Views and opinions expressed are however those of the author(s) only and do not necessarily reflect those of the European Union or the European Education and Culture Executive Agency. Neither the European Union nor the granting authority can be held responsible for them